ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 14-ին, N 236-Ա

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՈՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Լուսինե Վարդանյանի 2025 թվականի հուլիսի 14-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուսինե Վարդանյանին 2025 թվականի հուլիսի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գեղարոտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար երեք ամիս ժամկետով՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գեղարոտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վարդանյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Recoverable Signature
Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535
X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ